Զեկույց

Մասիս համայնքի 2024 թ. մարտի 1-ից մինչև ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում ձեռք բերված հիմնական միջոցների հաշվառման և վերաբաշխման վերաբերյալ

2024 թվականի մարտի 1-ից մինչև ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում Մասիս համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների հաշվին ձեռք է բերվել հիմնական միջոցներ ընդհանուր 22 603 228 դրամի, որոնք անհրաժեշտ է ներառել հաշվեկշռում և հաշվառել որպես համայնքային սեփականություն համաձայն հավելված 1-ի:

Համաձայն կից հավելված 1-ի 1 976 600 դրամ արժեքով գույքերը հաշվեկշռից-հաշվեկշիռ հանձնել «Մասիսի թիվ 3 մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով:

8 699 628 դրամի արևային ֆոտովոլտային կայանները հաշվեկշռից-հաշվեկշիռ անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով հանձնվել է Արգավանդ, Զրահովիտ, Զորակ, Սայաթ-Նովա, Մարմարաշեն բնակավայրերում գործող մսուր մանկապարտեզներին:

Ձեռք բերված 11 927 000 դրամ արժեքով գույքերը հանձնվել է Մասիսի համայնքապետարան ՀԿՀ-ին սեփականության իրավունքով:

Համայնքի ղեկավար Դ. Համբարձումյան

Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Ա. Կոստանյան